# ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԸՍՏ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Ա. Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

*1918 թ. Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո, նոյեմբերի 4-ին, Ահմեդ Իզզեթ փաշայի գլխավորությամբ կազմված նոր կաբինետը միջազգային հասարակական կարծիքի ճնշման տակ որոշում կայացրեց Թուրքիան առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանության ու կոտորածի համար դատական պատասխանատվության ենթարկել երիտթուրքերի կառավարության ղեկավարներին, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին։ Այնուհետև, Ստամբուլի սուլթանական կառավարության որոշումով (8 հունվարի 1919 թ.), հայերի տեղահանության և կոտորածների մեղսակիցներին պատժի ենթարկելու համար սկսեցին կազմվել դատական հարցաքննիչ հանձնախմբեր, որոնք հավաքում էին արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ, այդ թվում՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրամանգներ և հրամաններ, ինչպես նաև ականատեսների վկայություններ։ Միևնույն ժամանակ մամուլը լայն աշխատանք ծավալեց հանցագործներին բացահայտելու և դատաքննության հանձնելու համար։*

*Այս միջոցառումների ընթացքում ձերբակալվեցին երիտթուրքական կառավարության մի շարք մինիստրներ ու կուսակցական ղեկավարներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, որոշ կուսակալներ, զինվորականներ և այլ պաշտոնատար անձինք, որոնց ընդհանուր թիվը հասավ հարյուր հիսունի։ Հարկ է նշել, որ հայկական կոտորածների անմիջական մտահղացողներն ու կազմակերպիչները հասցրել էին արդեն փախուստի դիմել՝ ապաստան գտնելով իրենց դաշնակից Գերմանիայում։*

*1919 թ. մարտի 8-ին, երբ ընդհանուր տեսքի էին բերված մեղադրական փաստաթղթերը, սուլթան Մեհմեդ VI Վահիդեդդինի (1861—1922) հրամանագրով երիտթուրքական գործիչները հանձնվեցին Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանի քննության։ Այդ դատավարությունների արձանագրությունները ու որոշումները շատ քիչ տպաքանակով հրատարակվեցին թուրքական պաշտոնական «Թաքվիմ-ի վաքայի» թերթի հավելվածներում (արաբատառ)։ Թերթերի պատճենները պահվում են Հայկական ՍՍՀ կենտրոնական պատմական արխիվում (ֆոնդ 450, ցուցակ 2, գործ 52)։ Հարկ է երախտագիտությամբ նշել, որ այդ փաստաթղթերը արխիվին են հանձնված ֆրանսահայ հասարակական գործիչ Ռոժե (Կարպիս) Ջրբաշյանի կողմից։*

*Դատաքննության նիստերի բոլոր հրատարակությունները կրում էին հետևյալ խորագիրը. «Նորին մեծություն Փադիշահի 1335 (1919) թ. մարտի 8-ի կայսերական հրամանով կազմված ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը»։ 1919 թ. դատաքննություններն անցկացնող հանձնաժողովի անդամներն էին՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա (նախագահ), գեներալ-մայոր Զեքի փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա փաշա, գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա, գնդապետ Բեչեբ Ֆերդի բեյ։ 1920 թ. սկզբին կազմված ռազմական Առաջին արտակարգ ատյանի հանձնաժողովի անդամներն էին՝ գեներալ-մայոր Էսադ փաշա (նախագահ), գեներալ-մայոր Իհսան փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմի փաշա, գեներալ-մայոր Իսմայիլ Հակկը փաշա, գնդապետ Սուլեյման Շաքիր բեյ։*

## 1. Երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարությունը

Դատաքննությունն սկսվեց 1919 թ. ապրիլի 27-ին Ստամբուլում և ընդհատումներով տևեց մինչև հունիսի 26-ը։ Մայիս ամսին տեղի ունեցած 6 նիստերի ընթացքում հիմնականում հարցաքննության ենթարկվեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամները, մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և մի քանի մինիստրներ։ Իսկ հունիս ամսին մեղադրական նոր ապացույցների հիման վրա դատաքննության էին ենթարկվելու պետական բարձր պաշտոնատար անձինք, այդ թվում նաև երկրի հոգևոր առաջնորդներ (շեյխ ուլ-իսլամ) Հայրի, Մուսա Քյազիմ և Էսադ Էֆենդիները։ Սակայն մայիսի 28-ին անգլիական հրամանատարության կողմից 77 հոգի բանտից աքսորվեցին Մալթա կղզի։ Այսպիսով, հունիս ամսվա դատական 7 նիստերի ընթացքում լսվեց շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդիի, փոստի և հեռագրական մինիստր Հյուսեյն Հաշիմ բեյի, ծերակուտական ժողովի նախագահ Ռիֆաաթ բեյի դատաքննությունը։ Իսկ շեյխ ուլ-իսլամ Էսադ էֆենդին հիվանդության պատճառով ուղարկվեց բժշկական քննության։ Այս բոլորի դատավճիռը կայացավ 1919 թ. հուլիսի 5-ին։

Դատաքննությունների ընթացքում հեռակա կարգով մեղադրվում էին 11, իսկ դատավարությանը ներկա եղողներից՝ 21 կուսակցական և պետական բարձրաստիճան գործիչներ։

Ըստ դատաքննության կարգի, հանձնաժողովի նախագահ, գլխավոր-լեյտենանտ Մուստաֆա Նազիմ փաշան առաջին հերթին հաստատում է մեղադրյալների ինքնությունը, ինչպես նաև նրանց դատապաշտպանների առկայության հարցը։ Այնուհետև դատական քարտուղար Շեֆիկ բեյը ընթերցում է մեղադրական ակտը։ Միևնույն ժամանակ քրեական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիման վրա տրվում է գլխավոր դատախազ Մուստաֆա Նազմի փաշայի հավանությունը բացականերին հեռակա կարգով դատելու մասին։ Մուստաֆա Նազմի փաշան, նկատի ունենալով նաև թե՛ դատասկզբում և թե՛ ընթացքում դատապաշտպանների առարկություններն այն մասին, որ «մինիստրների և այլ պետական բարձր պաշտոնյաների հետ առնչվող դատական հայցերը քննարկման են ենթակա ոչ թե ռազմական արտակարգ ատյանում, այլ Գերագույն դատարանում», իր ելույթում նշում է, որ մեղադրական ակտում ցույց տրված հանցագործությունները տեղի են ունեցել ոչ թե մինիստրների պաշտոնավարության բերումով, այլ կուսակցության կենտրոնական կոմիտեի, ինչպես նաև նրա պլենումների գործադրած հանցագործությունների մասնակիցը դառնալու հանգամանքով։ Հերքելով հանցանքը պաշտոնավարության հիման վրա մեկնաբանելու փաստաբանների առարկությունները՝ Մուստաֆա Նազմի փաշան նշում է. «Բարբարոսային կոտորածները, անարգ չարաշահումները դժբախտաբար նույնպես վերագրվում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին, նրա պլենումներին և «Հատուկ կազմակերպության» (Թեշքիլաթ-ը մահսուսե) գործունեությանը։ Եվ այս անձնավորությունները դատի են տրված ոչ թե մինիստրի պաշտոնում գտնվելու համար, այլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության մեջ ղեկավար դիրք ունենալու և կենտրոնական կոմիտեի անդամ լինելու հանգամանքով։ Կոտորածների և չարաշահումների հետևանքով օսմանցիների արժանապատվության վրա ընկած արյունոտ հետքերը, օսմանցիների ճակատը մըրոտած սև բծերը կարելի է ջնջել միայն արդարության գրչով։ Եվ այս ձևով ջնջելու համար նրանց դեմ հայտարարվում է ջիհադ (սրբազան պատերազմ)։

Մեղադրական ակտում ցույց տրված և իրենց անմիջական հեղինակությամբ կատարված հանցագործությունների համար մեղադրվում են դոկտ. Բեհաէդդին Շաքիրը, Նազիմը, Աթիֆը, Ռիզան, Ջեվադը, Ազիզը, Էնվերը, Ջեմալը և Թալաաթը։ Այդ հանցագործություններին անուղղակի մասնակցություն ունենալու համար մեղադրվում են Միդհատ Շյուքրին, դոկտ. Ռուղուհին,

Քյուչուկ Թալաաթը, Զիյա Գյոք Ալփը, Քեմալ բեյը, Սայիդ Հալիմ փաշան, Ահմեդ Նեսիմին, Շյուքրին, Իբրահիմը և Խալիլը։ Օսմանյան արդարադատության հիման վրա պահանջում եմ սրանց ենթարկել դոնբաց դատաքննության» («Թաքվիմ-ի վաքայի», № 3540, էջ 8)։

Երրորդ նիստի սկզբում (պաշտոնավարության հարցի վերաբերյալ) դատարանը հավաստի փաստարկներով որոշում է վերոհիշյալների դատաքննությունը լսել ռազմական արտակարգ ատյանում (Ն. տ. № 3543, էջ 17)։

Հարկ է նշել, որ առաջին և հաջորդ մեղադրական ակտերում բերված փաստաթղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները վկայում են, որ արևմտահայության տեղահանությունը ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ այն տեղի է ունեցել բացարձակապես կուսակցության կենտրոնական կոմիտեի ցանկությամբ և նախաձեռնությամբ, որ հայերի տեղահանությունն ու կոտորածները ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են կրել, այլ՝ կանխամտածված և իրականացվել են հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով։ Մեղադրական ակտերում և հարցաքննության նիստերի ընթացքում հիմնական շեշտը դրվում է արևմտահայության կոտորածի վրա։ Իբրենք մի հատված առաջին դատավարության մեղադրական ակտից.

«Դոյություն ունեցող փաստերը վկայում են, որ իրավասու կոմիտեն մեղադրվում է օրինազանցության, չարաշահումների և մի շարք կոտորածներ կատարելու մեջ, որոնք հաստատում են այդ կոմիտեի վերոհիշյալ ազդեցիկ ղեկավարների պատասխանատվությունը։ Իրենց նենգ դիտավորությունները իրականացնելու համար նրանք ի վերջո կարողացան երկիրը ներքաշել համաշխարհային պատերազմի մեջ, ռազմական գործողությունների ընթացքում իրենց գաղտնի ծրագրերը իրականացնելու համար իրենց կողմից ստեղծված «Հատուկ կազմակերպության» միջոցով սկսեցին գաղտնապես իրագործել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծրագրերը։ Բանտերից դուրս բերված հանցագործներն ու ավազակները ընդգրկվեցին «Հատուկ կազմակերպության» մեջ։ Եվ այս կապակցությամբ սկզբնական շրջանում ջանք գործադրվեց միամիտ մարդկանց համոզելու, որ այդ ավազակախմբերն իբրև թե մասնակցելու են պատերազմական գործողություններին։ Մինչդեռ վերոհիշյալ ապացույցներն ու բոլոր փաստաթղթերը ցույց են տալիս, որ այդ հրոսակախմբերը ստեղծված էին տեղահանված հայերի քարավանները կոտորելու և ոչնչացնելու նպատակով» (ընդգծումը մերն է—Ա. Փ.) (№ 3540, էջ 6)։

Դատավարության 5-րդ և 6-րդ նիստերում մանրակրկիտ հետաքննության ենթարկվեց արևմտահայության կոտորածն իրականացնող «Հատուկ կազմակերպությունը», որը, ինչպես նշվեց, կյանքի էր կոչվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների կողմից հատուկ որոշմամբ։

Հարցաքննության ընթացքում, նկատի ունենալով իրենց կատարած հանցագործությունների ծանրությունը, մեղադրյալներն անընդհատ փորձում էին խուսանավել և շեղվել ստույգ պատասխաններից։ Այնուհանդերձ խաչաձև հարցաքննության ընթացքում և որպես մեղադրական ապացույց բերված հեռագրերի, նամակների և վկայությունների հիման վրա լիովին բացահայտվում է իրականությունը։ Այն է, որ տեղահանությունն ու կոտորածը ոչ միայն հավանության է արժանացել կենտրոնական կոմիտեի անդամների կողմից, այլև վճռվել է ձայների մեծամասնությամբ, գաղտնի նիստերից մեկում։

Պաշտոնատար անձինք մեղավոր էին ճանաչվում նրա համար, որ իրազեկ լինելով կոտորածների և այլ բռնությունների մասին, ոչ մի գործնական միջոցառում չեն ձեռնարկել դրանք կանխելու հարցում։ Ընդհակառակը, իրենց ձեռնպահությամբ նպաստել են, որպեսզի շարունակվի տեղի ունեցող այդ ողբերգությունը։ Օրինակ՝ շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին, որը որպես կրոնական առաջնորդ կարող էր մեծ ազդեցություն ունենալ այդ վայրագությունները խափանելու խնդրում, ոչ մի լական քայլի չի դիմել։ Հարցաքննու-

թյան ընթացքում նա փորձում է արդարանալ, որ ինքը պատասխանատու չէ կառավարության անդամների գործադրած հանցագործ արարքների համար, որ այդ հարցում մեղավոր է ներքին գործերի մինիստրությունը (հ. 3573, էջ 148)։ Նույնիսկ մի շարք այլ կարևոր հարցերի քննարկման ժամանակ, երբ իր կարծիքն են հարցրել, նա պատասխանել է. «Կուսակցությունն այդպես է ուզել, ուրեմն՝ այդպես էլ պիտի լինի» (հ. 3604, էջ 219)։ Իսկ մի այլ տեղ արտահայտել է հետևյալ միտքը. «Կուսակցությունից դուրս գալը նշանակում է իսլամի կրոնից հրաժարվել» (5-րդ դատավարություն, էջ 179)։

1919 թ. հուլիսի 5-ին արձակված դատավճռում, կրկին հիմնական շեշտը դնելով արևմտահայության տեղահանության, կոտորածների և ունեցվածքի կողոպտման հարցի վրա, նշվում էր կուսակցության կենտրոնական կոմիտեի և կառավարության ղեկավարների կողմից սահմանադրության ոտնահարման փաստերի մասին։ Կարևոր հանցանշաններից մեկն էր համարվում նաև առանց մեջլիսի որոշման առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու հարցը, ինչպես նաև առևտրի և հատկապես պարենային խնդրում տեղ գտած չարաշահումներն ու սպեկուլյացիան։

«Հետաքննությունը ցույց տվեց,— նշվում է դատավճռում,— որ օսմանյան պետության օրենքներն ստեղծվել են «երեքի զորությամբ», և այդ օրինազանցությունը կատարվել է ահաբեկչական ուժ գործադրելու միջոցով։ Այսպիսով, վերոհիշյալ հանցագործ արարքների անմիջական հեղինակներն են «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներն ու ընդհանուր մեջլիսի անդամները։ Այդ թվում՝ փախուստի մեջ գտնվող նախկին մեծ վեզիր Թալաաթ փաշան, նախկին ռազմական մինիստր, այժմ զինվորական շարքերից վտարված Էնվեր էֆենդին, նախկին ծովային մինիստր, նույնպես զինվորական շարքերից վտարված Ջեմալ էֆենդին և նախկին հանրակրթական մինիստր, դոկտ. Նազիմ էֆենդին, որոնց անմիջական հեղինակությամբ կատարվել են այդ հանցագործությունները։ Տվյալ հանցագործություններին անուղղակի մասնակցություն են ունեցել նաև հիշյալ մեջլիսի անդամներից, նույնպես փախուստի մեջ գտնվող ֆինանսների նախկին մինիստր Ջավիդ բեյը, ինչպես նաև առևտրի և հողագործության մինիստր Մուստաֆա Շերեֆ բեյը։ Բացահայտված է նաև, որ կատարված հանցագործություններում իրենց մեղսակցությունն են ունեցել նաև նույն ընդհանուր ժողովի անդամներից՝ դատարանում ներկա գտնվող նախկին շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին» (հ. 3604, էջ 219)։

Այսպիսով, քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետով դատարանը մահվան վճիռ կայացրեց Թալաաթին, Էնվերին, Ջեմալին և Նազիմին, իսկ 45-րդ հոդվածի երկրորդ կետի համաձայն, 55-րդ հոդվածի վերջին կետով Ջավիդը, Մուստաֆա Շերեֆը և Մուսա Քյազիմը դատապարտվեցին 15-ական տարի ժամկետով աքսորի։

Դատաքննության ենթարկված մեղադրյալներից մի քանիսը, իբրև թե բավարար հանցանշան չունենալով, ազատ արձակվեցին, այդ թվում՝ սենատի նախկին նախագահ Ռիֆաաթ բեյը, փոստի և հեռագրատան մինիստր Հաշիմ բեյը։ Այս վերջին երկուսի նկատմամբ տրված վճռին հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն էին համաձայն։ Դատավճռի վերջում (էջ 220) ռազմական արտակարգ ատյանի անդամ, ոստիկանության գեներալ-մայոր Մեհմեդ Զեքի փաշան, ստորագրելով հանդերձ, կատարել է հետևյալ նշումը. «Այս դատավճռին մասնակից լինելով հանդերձ՝ ես այն համոզմունքին եմ, որ մեղադրյալ Հաշիմ բեյը անուղղակի կերպով մասնակցություն է ունեցել նշված հանցագործություններին, քանի որ իր ցուցմունքներն ու առկա ապացույցներն այդ են վկայում»։

Նկատենք, որ դատավճռում ոչ բոլոր մեղադրյալների անուններն են հիշատակված, քանի որ նրանց մեծ մասը դաշնակիցների հովանավորությամբ կալանատնից վերցվելով աքսորվեցին Մալթա կղզի։

## 2. «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների և այլ պաշտոնատար անձանց դատավարությունը

Դատաքննության նիստերը տեղի ունեցան 1919 թ. հունիսի 21-ին, 23-ին և 28-ին, իսկ դատավճիռը կայացվեց շատ ուշ, այն էլ՝ Ստամբուլի ռազմական Առաջին արտակարգ ատյանի հանձնախմբի կողմից՝ 1920 թ. հունվարի 8-ին։ Մեղադրական ակտի և դատավճռի տվյալներով ամբաստանվում էին 35 անձինք։

19 հունիսի 1919 թվագրված մեղադրական ակտում մատնանշվում է, որ շրջանային պատասխանատու քարտուղարներն իրենց գործունեության ընթացքում կուսակցության կենտրոնական կոմիտեի և կառավարության կողմից ստացված բանավոր և գրավոր գաղտնի հրամանների համաձայն անօրեն միջամտություն են ունեցել կառավարության գործերին և մասնակցել մեղադրյալ Թալաաթ փաշայի և նրա գործընկերների կատարած հանցագործություններին։

«Ընդունված հատուկ օրենքի համաձայն,— նշվում է մեղադրական ակտում,— այլ վայրեր տարագրվող հայերի քարավանները ոչնչացվել են ճանապարհին, ստեղծված քրեական հանցագործ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց (հայերի—Ա. Փ.) գույքն ու ունեցվածքը ենթարկվել է կողոպուտի և հափշտակության։ «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդները մի ներքին գաղտնի ուժ ստեղծելով, զանազան ձևերով այլափոխել են Օսմանյան կայսրության սահմանադրական օրենքները և իրենց քմահաճ գործարքներն իրականացրել են վիլայեթներում «պատասխանատու քարտուղարներ» և «լիազորներ» անվան տակ գտնվող իրենց մարդկանց միջոցով։ Բացի այդ, հարստություն դիզելու մոլուցքով տարված, օգտագործել են պատերազմական իրավիճակը և ժողովրդին խիստ անհրաժեշտ մթերքների հարցում զբաղվել չարաշահումներով և սպեկուլյացիայով։ Միևնույն ժամանակ իրենց արարքներին արտաքուստ օրինականացման ձև տալով՝ գործել են ըստ իրենց քմահաճույքի» (№ 3586, էջ 164)։

Դեռևս «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարության առաջին փուլի 5-րդ և 6-րդ նիստերում որպես մեղադրական ապացույց բերված հեռագրերն ու նամակները միանգամայն հաստատում էին, թե ինչպիսի սերտ համագործակցության մեջ են եղել շրջանային պատասխանատու քարտուղարները կենտրոնական կոմիտեի հետ։ Այդ գրությունները ցույց են տալիս, թե ինչպիսի ակտիվ գործունեություն են ծավալել նրանք «Հատուկ կազմակերպության» համար քրեական հանցագործներ հավաքագրելու գործում (տե՛ս № 3554, 3557)։

Պատասխանատու քարտուղարների հարցաքննության ընթացքում հիմնական շեշտը նույնպես գրվում է արևմտահայության տեղահանության, կոտորածների և ունեցվածքի կողոպտման հարցի վրա։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության մի շարք ղեկավարների նախաձեռնությամբ տեղի ունեցած տեղահանության և կոտորածի գործում,— նշում է հանձնաժողովի նախագահ Մուստաֆա Նազրմ փաշան,— եթե մասնաճյուղերը օժանդակություն չցուցաբերեին, ապա այդ աստիճանի ողբերգություն տեղի չէր ունենա։ Հետևաբար, կուսակցության մասնաճյուղերն անուղղակի մասնակցություն են ունեցել։ Իսկ մասնաճյուղերի պատասխանատվությունն էլ ընկնում է քարտուղարների և լիազորների վրա» (№ 3596)։

Հարցաքննության ընթացքում Էդիրնեի պատասխանատու քարտուղարն ու մյուս մեղադրյալներն իրենց հանցանքը թեթևացնելու համար նույնպես աշխատել են խուսանավել և արդարանալու ուղիներ որոնել, պատասխանելով, որ տեղահանությունը, իբրև թե, կատարվել է օրենքի հիման վրա և կառավարության կարգադրությամբ։ Հանձնաժողովի նախագահ Մուստաֆա Նազրմ փաշան, հերքելով նրանց կեղծ ցուցմունքները, նշում է. «Օրենքի մեջ ասված է, որ տեղահանությունը կատարվելու է ռազմական տեսանկյունից անհրա-

ժեշտ եղած վայրերում, մի՞թե Դուք (խոսքը Էդիրնեի պատասխանատու քարտուղար Աբդուլ Ղանի բեյին է ուղղված—Ա. Փ.) չէիք նկատում, որ ձեզ մոտ դրա անհրաժեշտությունը չկար... մի՞թե չէիք կարող այդ հարցը քննարկել և ինչ-որ միջոցառում ձեռնարկել այդ ուղղությամբ...։ Օրենքով կատարված գործողությունների համար ոչ մեկին պատասխանատվության չենք ենթարկում։ Իրականությունն այն է, որ տեղահանության ճոդի տակ կոտորած են սարքել (ընդգծումը մերն է—Ա. Փ.)։ Ահա այդ արարքի համար է, որ ձեզ պատասխանատվության ենք ենթարկում» (հ. 3596)։

Այսպես, ուրեմն, 1920 թ. հունվարի 8-ի դատավճռում նշվում էր, թե ինչպես վերոհիշյալ պատասխանատու քարտուղարներից և լիազորներից մի քանիսը օժանդակել են կենտրոնական կոմիտեի նախաձեռնությանը և իրենց մասնաճյուղերում հավաքագրած մարդասպանների և այլ քրեական հանցագործների միջոցով կազմակերպել հայերի կոտորածն ու ոչնչացումը և նրանց ունեցվածքի կողոպուտը։ «Ահա այս ձևերով և օրենքի բուն ոգուն հակառակ,— նշվում է դատավճռում,— տեղահանությունը ծավալվել է բոլոր կողմերում համատարած և առաջ բերել ողբերգական ծանր իրավիճակ։ Բոլոր ապացույցներն ու փաստերը միանգամայն հաստատում են, որ կոտորածներն անմիջապես իրականացվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության ստեղծած «Հատուկ կազմակերպության» կողմից, իսկ պատասխանատու քարտուղարներից ոմանք նպաստել և հեշտացրել են այն իրենց մասնակցությամբ» (հ. 3772)։

Դատարանի որոշմամբ նրանց հանցագործ արարքներն առնչվում էին քրեական օրենսդրության 45-րդ հոդվածի ցուցումով՝ 55-րդ հոդվածի վերջին կետի հետ։ Այսպիսով, Սինոպի դեպուտատ Հասան Ցեհմի բեյը, Էդիրնեի պատասխանատու քարտուղար Աբդուլ Ղանի բեյը, Բոլուի պատասխանատու քարտուղար Միդհատ բեյը դատապարտվեցին տասը տարուց ավելի ժամկետներով բանտարկության։ Մի քանիսը դատապարտվեցին տարբեր ժամկետով բանտարկության, իսկ մյուսները դաշնակիցների կողմից կալանատնից վերցվելով աքսորվեցին Մալթա կղզի (№ 3772)։

### 3. Յոզղաթի, Տրապիզոնի, Բյուլում Դերեի և Խարբերդի տեղահանության և կոտորածների հանցավորների դատավարությունները

Այս դատավարությունների ընթացքում Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանը մանրամասն հետաքննություն էր կատարում նաև գավառներում տեղի ունեցած տեղահանության և կոտորածների անմիջական իրականացնողների նկատմամբ։

Առաջինը լսվեց Յոզղաթի հայության տեղահանության և կոտորածի գլխավոր հանցագործներ, Յոզղաթի մութասարրիֆի տեղակալ և Բոզազլյանի կայմական Քեմալ բեյի և Յոզղաթի ոստիկանության պետ, մայոր Թեվֆիկ բեյի կատարած հանցագործությունների հարցը։

Յոզղաթը գտնվում էր պատերազմական թատերաբեմից շատ հեռու, բայց տեղի հայությունը նույնպես ենթարկվեց դաժան հալածանքների։

«Հայերի դրամն ու ունեցվածքը կողոպտվելուց հետո,—ասված է 1919 թ. ապրիլի 8-ի դատավճռում,—նրանց քարավանները ճամփու էին դրվում կյանքի ապահովման բոլոր միջոցներից զուրկ։ Նույնիսկ մի շարք ստոր մարդկանց գաղտնի հրահանգները կատարելով, ոչ մի ուշադրություն չէին դարձնում նրանց կյանքի ապահովման խնդրին, այլ, ընդհակառակը, բոլոր տղամարդկանց ձեռքերը իրար ամուր կապելով, զրկում էին ինքնապաշտպանության ամեն մի հնարավորությունից։ Եվ այդպես մտածված կերպով առիթ էին տալիս, որպեսզի իրականացվի այդ ծանր ողբերգությունը» (հ. 3617)։

Դատավճռում բերված մեղադրական ապացույցները վկայում են, որ տեղի հայությանը կոտորելու համար Քեմալ բեյը ոտքի է հանել ոչ միայն իր

տրամադրության տակ գտնվող սանջակի թուրքերին, այլև կոչ է արել բոլոր մահմեդականներին ոտքի կանգնել հայ ժողովրդին խսպառ ոչնչացնելու համար։ Դատարանը միահամուռ մեղավոր ճանաչելով նրան, կայսերական քրեական օրենսգրքի 170 և 171-րդ հոդվածների հիման վրա նրան դատապարտեց մահվան, իսկ Թեվֆիկ բեյը նույն օրենսգրքի 45-րդ հոդվածով դատապարտվեց 15 տարվա տաժանակիր աքսորի։ Քեմալ բեյի մահավճիռը վավերացվեց սուլթանի կողմից և նրան կախեցին Ստամբուլի Բայազետի հրապարակում՝ 1919 թ. ապրիլի 11-ին։

Տրապիզոնի հայերի տեղահանությանը և կոտորածին վերաբերող դատավճռով մեղադրվում էին 8 հանցագործներ, բայց հիմնական պատասխանատվությունը դրված էր Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմի բեյի և կուսակցության պատասխանատու քարտուղար Նայիլ բեյի վրա։

Տրապիզոնի դատավճռում մանրամասն խոսվում է նաև հայերի լքյալ գույքերի կողոպտման և կորստի մատնելու մասին։ Այսպես՝ Տրապիզոնի ոստիկանապետ Նուրի էֆենդին իբրև թե հանձնարարված է եղել տեղահանված հայերի լքյալ գույքի հավաքման, գրանցման և պահպանման հարցը։ Մինչդեռ նա գործնականում ոչ մի միջոցառում չի ձեռնարկել այդ ուղղությամբ։ Ավելին, նրա հրամանով լքյալ գույքը հափշտակվելով, մատնվել է կատարյալ կորստի։

Գործադրված ծանր հանցագործությունների համար դատարանը վերոհիշյալ 170 և 171-րդ հոդվածների հիման վրա հեռակա կարգով մահվան է դատապարտել Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերին։ Դատարանում ներկա Տրապիզոնի հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյը դատապարտվեց տասը տարի ժամկետով տաժանակիր աքսորի, իսկ մնացած մեղադրյալները՝ 1—2 տարվա բանտարկության։

Ջեմալ Ազմի բեյը իր արժանի պատիժը գտավ հայ վրիժառուների կողմից՝ 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում։ Իսկ Նայիլ բեյն կախաղան բարձրացվեց Անկարայում՝ 1926 թ. Քեմալ Աթաթյուրքի դեմ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով։

Հայտնի է, որ պատերազմի ընթացքում երիտթուրքերը մի շարք վայրերում հաշվեհարդար տեսան նաև արաբների, ասորիների և հատկապես հույների նկատմամբ։ Օրինակ՝ Բյուլուք Դերեի (Ստամբուլի արվարձաններից մեկը) տեղահանության ժամանակ հայերի հետ ծանր հալածանքների ենթարկվեցին նաև հույները։

1919 թ. մայիսի 24-ին Բյուլուք Դերեի բնակչության տեղահանության պատասխանատուների համար ընդունված դատավճռում նշվում է, որ տվյալ շրջանի ղեկավարները տեղահանության ընթացքում, իրենց անձնական շահն ու ստոր մտադրությունները իրականացնելու համար, բնակչությանը տրամադրել են շատ կարճ ժամանակամիջոց, որպեսզի նրանք ստիպված լինեն իրենց ունեցվածքը թողնել ու հեռանալ։ Բյուլուք Դերեի ողբերգության հիմնական պատասխանատուներն էին ոստիկանապետ Աբդուլքերիմ և առևտրական Ռեֆիկ բեյերը, որոնք առանց խղճի խայթի, ոտնակոխ անելով մարդկային ամենատարրական իրավունքները, բնակչությանը բռնի տեղահանելով, կողոպուտի են մատնել բոլորի շարժական և անշարժ գույքերը (N 3618)։ Բյուլուք Դերեի գործի դատավճռով մեղադրյալները դատապարտվեցին մի քանի տարի ժամկետներով բանտարկության։

Դեռևս երիտթուրքերի կառավարության պարագլուխների դատավարության ընթացքում կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ և «Հատուկ կազմակերպության» նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյը հեռակա կարգով մեղադրվում է արևմտահայության տեղահանության և կոտորածների մտահղացման ու հիմնական կազմակերպիչներից մեկը լինելու ծանր հանցանքով։ Բեհաէդդին Շաքիր բեյը և Խարբերդի կուսակցության պատասխանատու քարտուղար Բեսնելի Նազըմ բեյը իրենց կատարած ծանր հանցագործությունների համար պատժի ենթարկվեցին Խարբերդի հայության տեղահանության և կոտորածի 1920 թ. հունվարի 13-ի դատավճռով։

«Մեղադրյալ դոկտ. Բեհաէդդին Շաքիր բեյը, որպես «Հատուկ կազմակերպության» նախագահ,— նշվում է դատավճռում,— Ստամբուլից դուրս գալով սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի և այլ վիլայեթներում։ Միևնույն ժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից և այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով, տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կոտորել է սեղահանված հայերին և նրանց ունեցվածքը եղթարկել կողոպուտի» (№ 3771)։

Բեհաէդդին Շաքիր բեյը հեռակա կարգով դատապարտվեց մահվան, իսկ Բեսնելի Նազրմ բեյը՝ 15 տարվա տաժանակիր աքսորի։ Դատավճռի վերջում դատական ատյանի երեք անդամներ նշում են կասարել, որ Բեսնելի Նազրմ բեյը նույն ասպիճանի հանցագործ է, ինչ Բեհաէդդին Շաքիրը, և պահանջել են նրա նկատմամբ նույնպես մահափոխ կայացնել։ Բեհաէդդին բեյը ևս սպանվեց հայ վրիժառուների կողմից՝ 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում։

Դասավարության նյութերը որոշակի պատկերացում են տալիս արևմտահայության տեղահանության և կոտորածների կազմակերպման ու իրագործման մասին։

Դասավորները, իհարկե, ոչ բոլոր դեպքերում ցուցաբերեցին անհրաժեշտ հետևողականություն և խորություն։ Նրանցից շատերը, կապված լինելով երիտթուրքերի հետ, հաճախ հակված էին չխորանալ կատարված փաստերի մեջ և չընդունել խիստ որոշումներ։ Եզրափակելով, պատերազմի ավարտից հետո երիտթուրքերի պարագլուխների դասավարությունը խոշոր երևույթ էր արևմտահայության նկատմամբ տեղի ունեցած հայածանքներն ու ցեղասպանությունը համայն մարդկության առաջ բացահայտելու տեսանկյունից։

## ГЕНОЦИД АРМЯН
## ПО ДОКУМЕНТАМ СУДЕБНОГО ПРОЦЕССА МЛАДОТУРОК

*А. А. ПАПАЗЯН*

**Резюме**

В 1919 году по решению султанского правительства Стамбула за вовлечение Турции в мировую войну и непосредственное осуществление высылки и резни западных армян государственные руководители младотурок, члены центрального комитета партии «Иттихад ве Теракки» («Единение и Прогресс»), а также районные ответственные секретари и другие должностные лица были преданы чрезвычайному военному суду. Материалы этого судебного процесса, которые в свое время были опубликованы в приложениях к турецкой официальной газете «Таквим-и вакаи» («Перечень событий»), полностью подтверждают ответственность государственных деятелей младотурок за осуществление высылок и резни западных армян.